ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 170-Ա
« 30 » ՕԳՈՍՏՈՍԻ 2023Թ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N259-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայտարարել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղը համալրելու համար մրցույթներ՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝

1) Հրապարակել պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղը համալրելու համար մրցույթներ անցկացնելու մասին հայտարարությունները՝ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N259-Ն որոշմամբ հաստատված կարգի N1 ձևի:

2) Ապահովել հայտարարությունների հրապարակումը և մրցույթների անցկացման ընթացակարգերը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

8/30/2023

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք.Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023թ օգոստոսի 30-ի
N [illegible]-Ա որոշման

Վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթների հրապարակման ենթակա Վայոց ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկը

1. «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վերնաշենի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ,
2. ՀՀ Վայոց ձոր մարզի «Զառիթափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
3. «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Չիվայի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ: